GUIDELINES

Ուղեցույց: Պրակտիկ Ուղեցույց. Նախածննդյան ախտորոշման ինվազիվ մեթոդներ

Translation from English to Armenian: *Yeva Chichoyan of YSMU, RI RHPOG (Armenia).*
Reviewed by: *Drs. Karine Tokhunts and Lilit Hovsepyan of the Armenian Association of Ultrasound in Obstetrics and Gynecology (Armenia)*

Մանկաբարձությունում և գինեկոլոգիայում ՈՒլտրաձայնային ախտորոշման միջազգային կազմակերպությունը (ISUOG) գիտական կազմակերպություն է , որը խթանում է ՈՒՁՀ-ն կլինիկական պրակտիկան, ինչպես նաև բարձրորակ ախտորոշիչ հետազոտությունների իրականացումն ու ուսուցումը կանանց առողջության պահպանման ոլորտում:

ISUOG-ի Կլինիկական ստանդարտների կոմիտեի (CSC) առաքելությունն է զարգացնել պրակտիկ ուղեցույցների և տեղեկացված-համաձայնության տեսության ձևակերպումը, որպեսզի ապահովվի առողջապահության ոլորտի մասնագետների տեղեկացված - համաձայնության վրա հիմնված մոտեցումը:Դրանք միտված են արտացոլել այն ինչ ISUOG ի կողմից համարվում է լավագույն պրակտիկա՝սկսած թողարկման պահից:Չնայած ,որ ISUOG ի կողմից արվել է ամենը ,որպեսզի ուղեցույցները լինեն առավել ճշգրիտ թողարկման պահից ի վեր,սակայն ընդունվում են ցանկացած արժանահավատ քննադատական առաջարկներ,կարծիքներ,տվյալներ՝ուղղված ուղեցույցների կատարելագործմանը:

Ներածություն

Տվյալ փաստաթղթի նպատակն է նկարագրել նախածննդյան ախտորոշման մեջ պտղի ինվազիվ հետազոտությունների հիմնական հայեցակետերը:

Տեխնիկական հարցերը,կլինիկական ցուցումները ,ախտորոշիչ մեթոդները և հնարավոր բարդությունները լայնորեն ներկայացված են հասանելի գրականության մեջ: Ներկա դարաշրջանում գերակշռում են հետզոտման ոչ ինվազիվ մեթոդները (պտղի ոչ բջջային ԴՆԹ –հետազոտման մեթոդները (cffDNA)),ինչի կապակցությամբ զգալիորեն նվազել է ինվազիվ միջամտությունների ծավալը ,որն ունի մեծ ազդեցություն կլինիկական պրակտիկայի վրա:Տվյալ ուղեցույցն ընդգրկում է ընթացիկ տեղեկատվություն ինվազիվ միջամտությունների ցուցումների և

ընթացակարգերի վերաբերյալ պրենատալ ախտորոշման նպատակով:Ապացուցողական բժշկության վրա հիմնված առաջարկությունների սանդղակները և խորհուրդների մանրամասները տրված են հավելված 1-ում:

1.Ամնիոցենտեզ

- *Ամնիոցենտեզը պետք է իրականացվի 15+0 շաբաթ գեստացիոն ժամկետը լրանալուն պես կամ հետո (Առաջարկությունների սանդղակ : A)*
- *A 20–22-G ասեղը տեղադրվում է տրանսաբդոմինալ շարունակական ուլտրաձայնային ախտորոշիչ վերահսկման պայմաններում (Առաջարկությունների սանդղակ : B)*
- *Անհրաժեշտ է խուսափել ասեղի ներդրումից պորտալարի պլացենտայի մեջ մտնող հատվացում միջով,և եթե դա տեխնիկապես հնարավոր է պետք է խուսափել անգամ պլացենտան վնասելուց ,հատկապես Rh(=) կանանց դեպքում (Առաջարկությունների սանդղակ : C)*

- *Ստացված ասպիրատում մայրական բջիջների հայտնաբերման հաճախականությունը մեծանում է հեմոռագիկ ամնիոտիկ հեղուկի առկայության դեպքում ,կամ մեթոդն իրականացնող բժշկի ցածր փորձառության դեպքում:Նվազեցնելու համար ստացված ամնիոտիկ հեղուկի մայրական բջիջներով աղտոտումը ,ցուցված է անջատել ստացված հեղուկի առաջին 2 ml –ը (Առաջարկությունների սանդղակ : C):*

Ամնիոցենտեզն իրենից ներկայացնում է տրանսաբդոմինալ ճանապարհով ամնիոտիկ հեղուկի ասպիրացիա (արտածծում) արգանդի խոռոչից:
Այս գործողությունը կատարվում է սկսած 1970 –ականներից:

Տեխնիկա

A 20–22-G ասեղը տեղադրվում է տրանսաբդոմինալ շարունակական ուլտրաձայնային ախտորոշիչ վերահսկման պայմաններում(2-5): Խորհուրդ է տրվում հստակ մուտք ,կանխարգելելու համար ամնիոտիկ թաղանթի վնասումը(Ապացույցի մակարդակ : 1 -)
Փոքր ռանդոմիզացված հետազոտությունը (n=200) համեմատելով 20-G և 22-G ասեղները նախատեսված ամնիոցենտեզի համար , ցույց է տվել ,որ ներարգանդային արյունահոսության հավանականությունը 2 դեպքում էլ գրեթե համանման են (4/100 8/100), սակայն ավելի մեծ տրամաչափի ասեղի դեպքում 20-G

ամնիոտիկ հեղուկն ավելի արագ է առբերվում (Ապացույցի մակարդակ : 2+): Ռետրոսպեկտիվ ուսումնասիրությունները (n=793) նմանատիպ արդյունք են հաղորդում պտղի կորստի տեսանկյունից 20-G (1.57%), 21-G (1.47%) , 22-G (1.61%) ասեղների օգտագործման դեպքում:

Ասեղի տրանսպլացենտար անցման հետևանքներն ուսումնասիրված են ռետրոսպեկտիվ (հետահայաց) կոհորտային հետազոտություններում:Պտղի կորստի հաճախականությունները գրեթե համարժեք են ամնիոցենտեզի ներթաղանթային և ներպլացենտար մուտքերի դեպքում,սակայն տրանսպլացենտար ասպիրացիան ուղեկցվում է արյունային ասպիրատի ստացման հավանականության մեծացմամբ (8 -11): Այնուամենայնիվ,ներկայումս առաջարկվում է խուսափել ասեղի ներդրումից պորտալարի պլացենտայի մեջ մտնող հատվածում և եթե դա տեխնիկապես հնարավոր է խուսափել պլացենտան վնասելուց (հատկապես Rh(=) կանանց դեպքում): (Ապացույցի մակարդակ : 1+):

- *Այն բանից հետո ,երբ ասեղը հասնում է ամնիոտիկ խոռոչ,ասեղի մանդրեն հեռացվում է և արտածծվում է 15–30 մլ հեղուկ(կախված ցուցումներից): Ասպիրացիան կարող է կատարվել վիրաբույժի ,ասիստենտի կողմից կամ վակուում սարքավորման միջոցով:*
- *Ստացված ամնիոտիկ հեղուկի նմուշներում կարող են հայտնաբերվել մայրական բջիջներ:Ինչպես ցույց են տվել նախկին հետազոտությունները , յուրաքանչյուր երկու նմուշներից մեկը պարունակում է մայրական բջիջների 20% ավել քանակություն,այս համամասնությունը գերազանցում է 50% -ը արյունային նմուշների դեպքում:Ռետրոսպեկտիվ 150 դեպքերի հետազոտությունները ցույց են ,տվել ,որ մայրական բջիջներով հագեցվածությունը հատկապես բարձր է ընկերքի վնասման դեպքում (6,0%-ը 1,0% -ի), երկու փորձերի դեպքում (27,5%- ը 2,0%-ի) և միջամտությունն իրականացնող բժշկի անփորձության դեպքում:Մայրական բջիջներով աղտոտվածությունը (0,35%)նվազել է վերջին 6332 հետազոտությունների պարագայում:Մայրական բջիջներով աղտոտումը նվազագույնի հասցնելու համար առաջարկվում է անջատել ստացված ասպիրատի առաջին 2 մլ-ը: (Ապացույցի մակարդակ : 2+):*

Ամնիոցենտեզի իրականացման ժամկետները:

Անվտանգությունն ու ախտորոշման հուսալիությունը հղիության վաղ (<14+0շաբաթ) և միջին (>15+0շաբաթ) եռամայակներում ուսումնասիրվել են դեռ

(RCT s)1990-ականներից: Չնայած հետազոտությունների փոքր քանակի (n = 695) հայտնաբերել են նմանատիպ հարաբերակցություն ինչպես ընդհանուր պտղի կորուստների (7.8% vs 7.4%) և այնպես էլ պտղի բնածին արատների դեպքում (2.4% vs 2.6%)18,19,սակայն ավելի լայնածավալ((n=4374)RCT) բազմակենտրոն հետազոտությունները ցույց են տվել ,որ վաղ ամնիոցենտեզը (11+0 ից12+6շաբաթ) ուղեկցվում է պտղի կորստի ավելի բարձր հաճախականությամբ (7.6% vs 5.9%),պտղի վերջույթներ դեֆորմացիաների բարձր հավանականությամբ (1.3% vs 0.1%) և միջամտությունից հետո պտղաջրերի վաղաժամ արտահոսքի հավանականության մեծացմամբ (3.5% vs 1.7%),ի տարբերություն (15+0 ից 16+6շաբաթ)ժամկետներում իրականացվող ամնիոցենտեզի (20,21):Սա կարող է պայմանավորված լինել արտաէմբրիոնալ ցելոմիկ ծածկույթի պահպանման հետ հղիության առաջին եռամսյակում,կամ ամնիոնի խոռոչում ամնիոտիկ հեղուկի ցածր մակարդակի հետ: Վերջին մտահոգությունների հետ կապված ,նեկայումս, գիտական և մասնագիտական մարմիններն առաջարկում են ամնիոցենտեզի իրականացումը հղիության 15+0 գեստացիոն հասակում (2,17,22): (Ապացույցի մակարդակ : 1+)

Լաբորատոր դրույթներ:

Ամնիոցիտների կուլտիվացման անհաջողություն դիտվել է 0.1% փորձերի դեպքում:

Կուլտիվացման անհաջողությունը գերազանցապես պայմանավորված է եղել ամնիոտիկ հեղուկի արյամբ աղտոտման և ուշ գեստացիոն ժամկետում կուլտիվացման հետ (17):

Ամնիոտիկ բջիջների գենետիկ մոզաիցիզմ հայտնաբերվել է 0.25 % դեպքերում:Այդ դեպքերում անցկացվում է գենետիկական խորհրդատվություն և կախված արդյունքից իրականացվում է պտղի արյան նմուշի հետազոտություն –իրական պտղի բջջային մոզաիցիզմը բացառելու նպատակով: 17.

Կուլտիվացման անհաջողության ռիսկն ավելանում է հղիության գեստացիոն ժամկետի աճին զուգահեռ: Ռետրոսպեկտիվ հետազոտությունները ցույց են տվել ,որ 28շաբաթ գեստացիոն ժամկետից բարձր ժամկետներում իրականացվող ամնիոցենտեզի դեպքում ,կուլտիվացման անհաջողության ռիսկը հասնում է 9.7% (23) (Ապացույցի մակարդակ : 2++):

Բարդություններ

Հղիները ,որոնք ենթարկվել են ամնիոցենտեզի ի համեմատ ստուգիչ խմբի ,

ենթարկվել են պտղի կորստի 0.1% -ից 1% ռիսկի ,վերջին տվլյայներով ավելի մոտ ռիսկի սանդղակի ստորին սահմանին: (Առաջարկությունների սանդղակ : Բ):

Միջամտության արդյունքում ամնիոտիկ թաղանթի պատռվածքի ռիսկը կազմում է 1–2%,ընդորում տվյալ դեպքում կանխագուշակումն ավելի բարենպաստ է,քան պտղաջրերի ինքնաբեր սպոնտան վաղաժամ արտահոսքի դեպքում: (Առաջարկությունների սանդղակ:B):

Պտղի վնասումն ու զգալի մայրական բարդությունները բավականին հազվադեպ երևույթներ են(Առաջարկությունների սանդղակ: D):

Փորձն ու տեղեկացվածությունը ամնիոցենտեզի միջամտությանը զգալիորեն կնվազեցնեն պտղի կորստի դեպքերը:Բազմակի միջամտությունները ,ամնիոտիկ հեղուկում արյան հետքերի առկայությունը և պտղի զարգացման դեֆեկտների առկայությունը մեծացնում են պտղի կորստի հավանականությունը:Այլ ռիսկի գործոնների ազդեցությունն ավելի նվազ է (Առաջարկությունների սանդղակ:C):

Պտղի կորուստ

Ամնիոցենտեզի արդյունքում պտղի կորստի հաճախականության մասին տվյալներ ստացվել են գերազանցապես դիտարկումների արդյունքում:Կա միայն մեկ RCT(Ռետրոսպեկտիվ կոհորտային հետազոտություն),իրականացված Դանիայում 1986 թվականին,որի ընթացքում 4606 ցածր ռիսկային կանայք դիտարկվել են թե ամնիոցենտեզից հետո ,թե սպասողական գործելակերպի պայմաններում:Պտղի կորստի հաճախականությունը ամնիոցենտեզից հետո կազմել է 1.7% ի տարբերություն ստուգիչ խմբի 0.7% ,փաստացի զիջելով 1.0% պայմանավորված ամնիոցենտեզ-կախյալ ռիսկով: (Առաջարկությունների սանդղակ : 1+):

Մի շարք դիտարկումային ուսումնասիրություններ և ժամանակակից հետազոտություններ ցույց են տվել ,որ կրելախախտի միջամտություն կախյալ ռիսկը կազմում է 0.11% (24) (Ապացույցի մակարդակ 2++): Դանիայում անցկացված 147 987 միջամտությունների վերանայումը, հրապարակված 2016 թվականին ,արձանագրել է կրելախախտ 0.56% ամնիոցենտեզից հետո28 օրվա ընթացքում և 0.09% ռիսկ մեռելածնության ամնիոցենտեզից հետո 42 օրվա ընթացքում (25) (Ապացույցի մակարդակ 2++):

Ամնիոտիկ հեղուկի արտահոսք

Ամնիոցենտեզին հաջորդող ամնիոտիկ հեղուկի արտահոսքի ռիսկը բարձր է հղիության առաջին 24 շաբաթներում:Այս երևույթի առաջացման ռիսկը տատանվում է 1-2% -ի սահմաններում (17,19,26):Այնուամենայնիվ ամնիոցենտեզի արդյունքում ամնիոտիկ հեղուկի արտահոսքի և նույն ժամկետում ամնիոտիկ հեղուկի ինքնաբեր արտահոսքի համեմատման արդյունքում հաստատվում է ,որ առաջին դեպքում պտղի կորստի ռիսկը ավելի ցածր է (27):(Ապացույցի մակարդակ : 2++):

Խորիոնամնիոնիտ

Խորիոնամնիոնիտի և արգանդային ինֆեկցման ռիսկը ամնիոցենտեզից հետո շատ ցածր է (<0.1%) (17):

Ասեղային վնասվածք

Ամնիոցենտեզի ասեղով առաջացող պտղի վնասման հաճախականությունը բավականին ցածր է (17): Նկարագրված են եզակի վնասվածքներ,առավելապես առանց ուղեցույցների իրականացված միջամտությունների ժամանակ:Նկարագրված են ակնագնդի վնասվածք,մաշկի վնասվածք(քերծվածք,կտրվածք),ջլերի վնասվածք,պտղի անոթների վնասվածք,ուղեղի վնասվածք (այդ թվում ցեֆալոմալացիա) (32,33) (Ապացույցի մակարդակ : 3):

Մայրական բարդություններ

Ամնիոցենտեզի արդյունքում առաջացած ծանր մայրական բարդություններ ,ինչպիսիք են սեպսիսը և մայրական մահը նկարագրվում են շատ հազվադեպ (34-38): Այս հետևանքները կարող են պայմանավորված լինել մոր աղիները անզգուշությամբ վնասելու հետ:Ավելին ,միկրոօրգանիզմները կարող են կոլոնիզացնել ՈՒՀ սարքի գելը և զոնդը և բերել մոր ինֆեկցման: (Ապացույցի մակարդակ:3):

Բարդությունների ռիսկի գործոններ

Տարեկան հարյուր և ավել միջամտությունների իրականացման դեպքում դիտվում է պտղի կորստի ցածր ռիսկ (Ապացույցի մակարդակ :2+)

Ամնիոցենտեզի ընթացակարգերի (երեք և ավելին պունկցիա) մեծ քանակը ավելացնում են պտղի կորստի ռիսկը:Եթե անհրաժեշտ են երկու և ավելի

միջամտություններ ,ապա դրանք անհրաժեշտ է իրականացնել առնվազն 24 ժամ միջակայքով (3,23):

Պտղի կառուցվածքային անոմալիաների առկայությունն ինքնին ասոցացվում է կրելախախտի բարձր ռիսկով,որը մեծանում է յուրաքանչյուր հաջորդ ամնիոցենտեզի հետ:Արյունային կամ դարչնագույն ամնիոտիկ հեղուկի ստացումը,խոսում է ներամնիոնալ արյունահոսության մասին և հետագա պտղի կորստի ռիսկի մասին:Սա վկայում է ,որ ներամնիոնալ արյունահոսության հիմքում կարող է ընկած լինել պլացենտայի ախտաբանությունը(Ապացույցի մակարդակ :2+):

Ըստ փորձագետների կարծիքի հարց է ծագում ամնիոցենտեզ իրականացնող վիրաբույժի կոմպետենտության ,երբ պտղի կորստի հաճախականությունը գերազանցում է 4/100 անընդմեջ իրականացվող ամնիոցենտեզի պրոցեդուրաների դեպքում(Ապացույցի մակարդակ: 2+):

Ամնիոցենտեզի ընթացքում պտղի կորստի ռիսկը բարձրացնող մի քանի ռիսկի գործոններ ևս առաջարկվել են,որոնք սակայն դեռևս հետևողականորեն ապացուցված չեն: Ռիսկի գործոնների այս խմբին են պատկանում արգանդի ֆիբրոիդները ,Մյուլլերյան մալֆորմացիաները,խորիոնամնիոնալ անջատում ,ռետրոխորիալ հեմատոմա,նախորդող կամ ընթացիկ մայրական արյունահոսություն,մոր ՄԶԻ-ն >40 kg/m2,բազմածնություն(>3 ծննդաբերություն),արտահայտված հեշտոցային վարակ,անամնեզում երեք և ավելի կրելախախտերի առկայություն (Ապացույցի մակարդակ :2+/2-):

2.Խորիոնի թավիկների բիոպսիա (ԽԹԲ)

ԽԹԲ-ն պետք է իրականացվի 10+0 շաբաթ գեստացոին ժամկետից հետո(Առաջարկությունների սանդղակ : A)

Այն կարող է իրականացվել տրանսաբդոմինալ կամ տրանսցերվիկալ ,կախված իրականացնող բժշկի փորձառությունից և պլացենտայի տեղակայումից:

Չկան կատարված համեմատական ռետրոսպեկտիվ կոհորտային հետազոտություններ ԽԹԲ ենթարկված և չենթարկված խմբերում պտղի կորստի ցուցանիշների մասին,սակայն դիտողական հետազոտությունները ցույց են տվել ,որ այն բավականին ցածր է 0.2 ից - 2%(Առաջարկությունների սանդղակ :B):

Կրեախախտերի ռիսկը ԽԹԲ-ից հետո նվազում է բժշկի փորձի աճին համեմատական:Կրկնակի պունկցիաները և գեստացիոն ժամկետը <10 շաբաթ բարձրացնում են պտղի կորստի ռիսկը:Առաջարկությունների սանդղակ :B):

Այս միջամտության արդյունքում դուրս են բերվում տրոֆոբլաստի բջիջները պլացենտայից :Տվյալ միջամտությունը առաջին անգամ նկարագրվել է Չինաստանում 1970-ականների կեսերին և շրջանառության մեջ է դրվել կլինիկական պրակտիկայում 1980-ականների սկզբին:

Տեխնիկա

Ասեղը պետք է ներդրվի պլացենտա ՈՒՀ շարունակական հսկողությամբ:Որպես կանոն դա իրականացվում է ազատ ձեռքի տեխնիկայով՝ բժշկի ազատ ձեռքով կամ բիոպսիայի ադապտոր սարքի միջոցով:Քանի որ այս երկու եղանակների արդյունավետության և անվտանգության մասին տվյալները բացակայում են ,ուստի մեթոդի ընտրությունն իրականացվում է ելնելով բժշկի փորձառությունից կամ նախընտրությունից (7,45):Դեպի պլացենտա մուտքը տրանսցերվիկալ է կամ տրանսաբդոմինալ:ՌԿՀ անցկացվող 3873 կանանց հետ(գեստացիոն ժամկետը 7-12 շաբաթ ,առավելապես>10շ.)ցույց են տվել ,որ պտղի կորստի (2.3% և 2.5%)և հաջող նմուշառման (95% vs 94%) հաճախականությունները երկու դեպքում էլ գրեթե միևնույնն են(46): (Ապացույցի մակարդակ:1 +):

Տրանսաբդոմինալ մուտք

Այս մուտքով ԽԹԲ դեպքում կարող է օգտագործվել տեղային անզգայացում: (Ապացուցողական մակարդակ:4):Օգտագործվում է կամ կենտ ասեղ 17–20G համարի կամ զույգ ասեղային հավաքածու՝ արտաքինը 17/19G և ներքինը 19/20G համարներով (Ապացուցողական մակարդակ 1–): Այն պահին երբ ասեղը հասնում է նախատեսված թիրախին պլացենտայում իրականացվում են ասեղի 1-10 հետ ու առաջ շարժումներ,որոնց ընթացքում իրականացվում է վակուում նմուշառնում և նմուշների ասպիրացիա վակուում ադապտորի կամ օգնականի ձեռքային օժանդակման միջոցով(3,45,48) :

Տրանսցերվիկալ մուտք.

- *Բիոպսիայի համար նախատեսված աքցանը անցակցվում է ներհեշտոցային և պարանոցային խողովակի միջոցով մոտեցվում տրոֆոբլաստի թիրախ հատվածին: Բիոպսիայի իրականացման համար կարող է կիրառվել նաև*

պլաստիկ կամ մետաղյա մանդրենով կատետր: ՌԿՀ անցկացվող 200 կանանց հետ (10+0 -ից 12+6 գեստացիոն ժամկետում) իրականացված ԽԹԲ ցույց են տվել ,որ տրավմատիզմի և արդյունավետության հաճախականությունը բիոպսիայի աքցանի և կատետրի օգտագործման արդյունքում համադրելի են (Ապացույցի մակարդակ: 1–),ամեն դեպքում վերջին մեթոդը նախընտրելի է և՛ բժշկի ,և՛ պացիենտի կողմից (49):Ստացված խորիոնի թավիկների քանակը գնահատվում է տեսողական: Վավերական արդյունքի համար պահանջվում է ոչ պակաս քան 5 մգ նմուշ:նմուշառման ձախողում նկարագրված է 2.5–4.8% դեպքերում (2,45):

Ժամկետները

- *ԽԹԲ չպետք է իրականացվի մինչև հղիության 10+0 շաբաթ գեստացիոն ժամկետը , պայմանավորված մինչ այդ բարդությունների և պտղի կորստի բարձր ռիսկով (2,17): 1990 սկզբում իրականացված հետազոտությունները հաղորդում են ,որ մինչև հղիության 10+0 շաբաթ ԽԹԲ ենթարկված հղիների պտուղների մոտ էականորեն բարձր է դիմածնոտային հիպոպլազիայի և վերջույթների ձևախախտման հավանականությունը ի համեմատ ընդհանուր պոպուլյացիայի: Տվյալ վարկածը հաստատելու կամ հերքելու համար հետազոտություններն անբավարար են:Ենթադրվում է ,որ պտղի վերջույտներ և ծնոտի հյուսվածքները մինչև հղիության 10+0 շաբաթը առավել զգայուն են անոթային արյունամատակարարման խաթարման հանդեպ (3,50,51) (Ապացույցի մակարդակ: 3)*

Լաբորատոր ասպեկտներ

Ցիտոտորոֆոբլաստային կուլտուրայի ստացման ձախողում դիտվում է մինչև 0.5% դեպքերում ,այն էլ երբ խորիոնի թավիկների զանգվածը փոքր է 5 մգ –ից(49): Ընդ որում որոշ դեպքերում դիտվում է մայրական դեցիդուալ բջիջներով նմուշի կոնտամինացիա (ախտոտում),որից խուսափելու համար անհրաժեշտ է տարանջատում մանրադիտակի միջոցով (52) (Ապացույցի մակարդակ : 2–): Պլացենտար բջիջների մոզաիցիզմ նկատվում է 1% դեպքերում (17):Այս պարագայում պահանջվում է գենետիկ խորհրդատվություն և խորհուրդ է տրվում ամնիոցենտեզ՝ տարբերակելու համար պտղի բջիջների մոզաիցիզմը պլացենտար սահմանափակ մոզաիցիզմից (17):

Բարդություններ

Պտղի կորուստ

Տվյալներ ԽԹԲ կախված կրելախախտերի ռիսկի վերաբերյալ առկա են միայն ՌԿՀ հիման վրա ստացված:ԽԹԲ ենթարկվող կանանց մոտ ի համեմատ հսկիչ խմբի պտղի կորստի ռիսկը կազմում է 0.2% -ից 2% (2,24) : Ռիսկը ցածր է փորձառու կենտրոններում և բարձրանում է ավելի ցածր փորձառությամբ կենտրոններում տատանվելով 1/150 ից 1/500 (2,53):

Ռետրոսպեկտիվ հետազոտությունները կատարված Դանիական ռեեստրում,որտեղ հետազոտվել են 31 355 կանայք,որոնց մոտ իրականացվել է ԽԹԲ ,ցույց են տվել ,որ պտղի ընդհանուր կորուստների հաճախականությունը ԽԹԲ –ից հետո կազմում է 1.9%(այն դեպքում ,երբ ամնիոցենտեզից հետո կազմում է 1.4%): Ընդորում կրելախախտերի հաճախականությունը հակադարձ համեմատական կորելացիայի մեջ է իրականացվող միջամտությունների թվի հետ և 40%-ով բարձր է այն բաժանմունքներում ,որտեղ իրականացվում է ավելի քիչ քան 1500 միջամտություն ի համեմատ բաժանմունքների անցկացնող 1500-ից ավելի միջամտություններ (40) (Ապացույցի մակարդակ:2 ++).:Նույն տվյալների բազայի թարմացումը ցուց է տվել ԽԹԲ –ի չունի էական ազդեցություն պտղի կորստի հաճախականության վրա: (Կրելախախտի ռիսկը 0.21% ԽԹԲ ից 21 օր հետո) (25) (Ապացույցի մակարդակ :2+):Ստացված արդյունքը համանման է իրականացված ծավալուն ռետրոսպեկտիվ հետազոտությանը,երբ գրանցվել են կրելախախտերի հաճախականությունը ԽԹԲ տարած 5243 կանանց մոտ ի համեմատ 4917 կանանցից կազմված հսկիչ խմբի:Համաձայն այս հետազոտության պտղի կորստի հաճախականությունը ԽԹԲ տարած կանանց մոտ էականորեն չի բարձրանում ի համեմատ հսկիչ խմբի, (24 շաբաթից 0,22% (95%CI; 0,71 – 1,16%) (24); այս հետազոտության մեջ ընդգրկված չեն 2016 Դանիական տվյալները (Ապացույցի մակարդակ :2++):

Տրանսցերվիկալ ԽԹԲ ի արդյունքում պտղի կորստի հաճախականությունը կազմել է 2.5% - 1251 միջամտությունների ռետրոսպեկտիվ դիտարկման արդյունքում: Կրելախախտերի հաճախականության համանման արդյունքներ են ստացվում լայնածավալ ՌԿՀ ժամանակ ,երբ համեմատվում են ԽԹԲ տրանցերվիկալ և տրանսաբդոմինալ մեթոդների արդյունքները (2.5% ընդդեմ 2.3%)(Ապացույցի մակարդակ: 1+):Ռանդոմիզացված հետազոտություններից մեկը համեմատել է կրելախախտերի հաճախականությունը հղիության երկրորդ եռամսյակում իրականացվող ամնիոցենտեզի հետ,որի արդյունքում չի հայտնաբերվել էական

տարբերություն կրելախախտերի ընդհանուր հաճախականության մեջ երկու միջամտությունների դեպքում (6.3% ընդդեմ 7%; հարաբերական ռիսկ (ՀՌ), 0.90 (95% CI,0.66–1.23) (36) (Ապացույցի մակարդակ: 1-):

Այնուամենայնիվ չորս ռանդոմիզացված հետազոտությունների մետա վերլուծությունը ցույց է տվել,որ ի տարբերություն երկրորդ եռամսյակում իրականացված ամնիոցենտեզի տրանսցերվիկալ ԽԹԲ –ն կրում է հղիության ընդհանուր կրելախախտերի (ՀՌ, 1.40 (95% CI, 1.09–1.81))և ինքնաբեր վիժումների (ՀՌ 1.50 (95% CI, 1.07–2.11) (57)ավելի բարձր ռիսկ:

Հեշտոցային արյունահոսություն

Հեշտոցային արյունահոսությունը հանդիպում է միջամտությունների 10% դեպքերում (52,53))։Ընդորում այս երևույթը ավելի հաճախակի է տրանսցերվիկալ միջամտությունից հետո(ավելի քան 30% միջամտությունների ընդհանուր թվից) , ի համեմատ տրանսաբդոմինալի (Ապացուցողական մակարդակ: 2-):

Հազվադեպ բարդություններ

Ամնիոտիկ հեղուկ արտահոսք միջամտությունից հետո դիտվում է < 0.5% դեպքերում (Ապացուցողական մակարդակ:2-):Հստակ տվյալներ այդ դեպքում հղիության կրելախախտի վերաբերյալ չկան:ԽԹԲ իվ հետո խորիոնամնիոնիտի և ներարգանդային ինֆեկցման ռիսկը շատ ցածր է (1–2/3000) (52) (Ապացուցողական մակարդակ:2-):Սեպտիկ շոկի և մայրական մահացության որևէ դեպք ԽԹԲ-ից հետո չի նկարագրվել:

ԽԹԲ –ի կապը պրեէկլամպսիայի և ՊՆԱԴ-ի հետ

Կան որոշ հաղորդումներ ,որոնք կապ են հաստատում ԽԹԲ –ի և հղիության երկրորդ կեսում զարգացող գեստոզի՝պրեէկլամպսիայի միջև ,ենթադրաբար պայմանավորված ԽԹԲ-ի արդյունքում պլացենտայի վնասմամբ,սակայն այս եզրահանգումները շարունակական հետազոտությունների արդյունք չեն և չեն հաստատվել մետա վերլուծությունների արդյունքում(58) (Ապացուցողական մակարդակ:2+): Կախյալ հետազոտությունը չի հայտնաբերել կապ ԽԹԲ –ի և հետագա ՊՆԱԴ- ի միջև,հետազոտությունների ավելի բարձր մակարդակը ցույց է տվել ,որ պրեէկլամպսիայի համեմատաբար բարձր հաճախականությունն ԽԹԲ տարած կանաց մոտ պայմանավորված է առավելապես ,մայրական և պտղային ուղեկցող բարդություններով,մասնավորապես ցածր հղիության հետ

ասոցացված պրոտեին A(PAPP-A),արգանդային զարկերակների ռեզիստենտության բարձրացում (Ապացուցողական մակարդակ:2+):

Բարդությունների առաջացման ռիսկեր

Պտղի կորստի ցածր հաճախականություն գրանցվում է ,եթե տարեկան կտրվածքով անցկացվում են ավելին քան 100 միջամտություններ:

Փորձագետների կարծիքով միջամտությունն իրականացնող բժշկի կոմպետենտությունը պետք է վերագնահատվի ,եթե պտղի կորստի տեմպերը գերազանցում են 8/100, իսկ նմուշառման ձախողման տեմպերը գերազանցում են 5/100 (2):

Ըստ լայնածավալ ռետրոսպեկտիվ հետազոտությունների ԽԹԲ –ից հետո զարգացող կրելախախտի ռիսկի գործոններն են-աֆրոամերիկյան ռասսան,առնվազն երկու ասպիրացիա՝ասեղի երկու ներդրում ,ծանր արյունահոսություն ԽԹԲ-ի ընթացքում,մոր տարիքը փոքր 25-ից,գեստացիոն ժամկետը <10 շաբաթ(Ապացուցողական մակարդակ: 2++): Պտղի կառուցվածքային անոմալիաների ինչպես նաև հաստացած օձիքային տարածության առկայությունը ասոցացվում են կրելախախտի բարձր ռիսկի հետ,որն ավելի է մեծանում ԽԹԲ –ից հետո (2): PAPP-A պրոտեինի ցածր մակարդակը ևս ասոցացվում է ԽԹԲ -ից հետո կրելախախտի բարձր ռիսկի հետ:Ենթադրվում է ,որ դա պայմանավորված է նրանով,որ PAPP-A ցածր մակարդակն ինքնին հետևանք է պլացենտար ֆունկցիայի խանգարումների (60) (Ապացուցողական մակարդակ:2++): Կան գործոններ,որոնք ենթադրաբար մեծացնում են ԽԹԲ ին հաջորդող պտղի կոստի ռիսկը,չնայած դրանց հավաստիությունը չի ապացուցվել:Այդպիսիք են արգանդի միոմա ,մոր մեծ տարիք ,արգանդի զարգացման անոմալիաներ,խորիոնամնիոնալ տարանջատում ,ռետրոխորիալ հեմատոմա,նախորդող կամ ներկա մայրական արյունահոսություն,հետթեքված արգանդ,պտղի կայուն բրադիկարդիա միջամտությունից հետո (Ապացուցողական մակարդակ:2-):

3.Պտղի արյան նմուշառում (ՊԱՆ)

- *ՊԱՆ-ը կատարվում է տրանսաբդոմինալ ճանապարհով ,հղիության 18+0 գեստացիոն ժամկետից հետո, 20–22-G համարի ասեղով՝շարունակական ՈՒՀ հսկողության ներքո:*
- *ՊԱՆ ամենահաճահախակի ցուցումներն են պտղի քրոմոսոմային մոզաիցիզմի կասկածի հաստատումը ամնիոցենտեզից հետո և պտղի հեմոգրամմայի գնահատումը:*
- *ՊԱՆ-ից հետո պտղի կորստի ռիսկի գործոններ են՝պտղի կառուցվածքային դեֆեկտները (ներառյալ ջրգողությունը),ՊՆԱԴ և ենթադրաբար գեստացիոն ժամկետը <24 (Առաջարկությունների սանդղակ: B):*
- *ՊԱՆ- ի նպատակով պորտալարի երակին հասնելու տարբեր եղանակներ կան՝կորդոցենտեզը (պորտալարի պլացենտայի մեջ մտնող հատվածում և պորտալարի ազատ գալարում) և երակի ներլյարդային հատվածի պունկցիա պտղի լյարդի միջով:*
  Կորդոցենտեզը դա ՈՒՀ շարունակական հսկողությամբ իրականացվող պորտալարի երակի պունկցիան է՝դիագնոստիկ (ՊԱՆ)կամ թերապևտիկ (ներարգանդային տրանսֆուզիայի կամ դեղորայքի ներմուծման) նպատակներով: ՊԱՆ վերաբերյալ առաջին նկարագրությունները հրատարակվել են 1987 թվականին: ՊԱՆ պետք է իրականացվի հղիության 18+0 գեստացիոն ժամկետից հետո, քանի որ մինչ այդ իրականացված միջամտությունը հղի է պտղի կորստի բարձր ռիսկով (62):

Տեխնիկա

- *Շարունակական ՈՒՀ հսկողության ներքո 20–22-G համարի ասեղը տրանսաբդոմինալ մուտքով ներդրվում է պորտալարի երակ:Առավել տարածված է ազատ ձեռքային մեթոդը,սակայն որոշ դեպքերում օգտագործվում է ասեղի ուղղորդիչ:Եթե ընկերքը արգանդի առաջային պատին է ,խորհուրդ է տրվում պունկցիան կատարել պորտալարի պլացենտային կպման մակարդակին ,եթե պլացենտան կպած է արգանդի հետին պատին ,ապա կատարվում է պորտալարի ազատ գալարի պունկցիա կամ պորտալարի երակի ներորովայնային հատվածի պունկցիա (62) (Ապացուցողական մակարդակ : 4):*

Այն պահին ,երբ ասեղը հասնում է թիրախին , խորհուրդ է տրվում լվացում ֆիզ լուծույթով , ճիշտ տեղակայումը հստակեցնելու համար:Պետք է զգուշանալ պորտալարի զարկերակների վնասումից:Ներարկիչի միջոցով ասպիրացիան կատարվում է բժշկի կամ օգնականի կողմից ,մինչև արյան նմուշի ստացումը:Արյան ծագումը պետք է հստակեցվի մանրադիտակով (ավտոմատացված արյան անալիզատոր)-գնահատվում է բջջի միջին կորպուսկուլյար չափը կամ կիրառվում է արագ թթվայնացման թեստ (i.e.Kleihauer Betke or Apt test) (62):

- *Պտղի ներլյարդային երակի պունկցիան այլընտրանքային մեթոդ է ,որը կիրառվում է ,երբ պորտային երակի պունկցիան դժվարացած է ,կամ ձախողված (63): Այս մեթոդի լրացուցիչ առավելություններն են պորտալարի հետ կապված բարդությունների բացակայությունը ,պտղի արյան կորստի և մայր-պտուղ արյունահոսության ցածր ռիսկը և վստահություն նմուշի պտղային ծագման վերաբերյալ:*

Պտղի կորուստ

- *ՊԱՆ-ից հետո առաջացող պտղի կորստի ռիսկը կազմում է 1%-2% (64-66): Լայնածավալ ռետրոսպեկտիվ հետազոտությունը անցկացված 1821 կանանց հետ ,որոնք ենթարկվել են բարեհաջող ՊԱՆ , ցույց է տվել ,որ տվյալ միջամտությունն ուղեկցվում է 3.2% պտղի կորստի ռիսկով, ի տարբերություն ՊԱՆ չենթարկված կանանց ստուգիչ խմբի 1.8%, փաստորեն պտղի կորստի ռիսկը ՊԱՆ ենթարկված կանանց մոտ գերակշռում է 1.4%-ով ստուգիչ խմբին (Ապացուցողական մակարդակ:2++)(64):*
- *Գործոնները ,որոնք բերում են ՊԱՆ-ից հետո պտղի կորստի բարձր ռիսկի հետևյալն են պտղի անոմալիաներ,ՊՆԱԴ, գեստացիոն ժամկետ <24 շաբաթ: Փոքր ռետրոսպեկտիվ հետազոտությունները ցույց են տվել , որ պտղի կորստի հաճախականությունը կառուցվածքային անոմալիաներ ունեցող պտղի դեպքում կազմում են 14%, պտղի ջրգողության դեպքում 25% և ՈՒՀ տվյալներով առանց ախտաբանության պտղի դեպքում 1% (66) (Ապացուցողական մակարդակ: 2++):*
  Համանման , բայց ավելի ծավալուն (n=1878) հետազոտությունն ևս ցույց է տվել պտղի կորստի բարձր ռիսկ կառուցվածքային անոմալիաներով (13.1%) և ՊՆԱԴ ունեցող (8.9%) պտուղների դեպքում , ի համեմատ առանց ՈՒՀ անկանոնությունների ստուգիչ խմբի 1% (66) (Ապացուցողական

մակարդակ:2++):Բացի այդ, ռետրոսպեկտիվ հետազոտությունների լայնածավալ շարք հայտնաբերել է պտղի կորստի բարձր ռիսկ մինչև հղիության 24 շաբաթն իրականացված միջամտության դեպքում ,ի տարբերություն >24 շաբաթական խմբի (2.7% ընդդեմ 1.9%) (67) (Ապացուցողական մակարդակ: 2++):
Այս միջամտությունը պետք է իրականացվի միայն փորձառու մասնագետի կողմից:Չնայած չկան հստակ տեղեկություններ բարդությունների առաջացման և ձախողման ռիսկի նվազման վերաբերյալ միջամտությունն իրականացնողի փորձի ավելացմանը զուգընթաց:

4. Ինվազիվ նախածննդյան ախտորոշիչ միջամտությունների իրականացման չափանիշները

Ցանկացած ինվազիվ միջամտության պետք է նախորդի մանրակրկիտ խորհրդատվություն,որը կբացահայտի ակնկալվող օգուտը ,ռիսկերը և միջամտության տեխնիկական առանձնահատկությունները:

Ինվազիվ միջամտությունների իրականացման գործող հիմնական ցուցումներն են պտղի քրոմոսոմային անոմալիաների առկայության բարձր ռիսկ,ժառանգական գենետիկ հիվանդությունների և մետաբոլիկ խանգարումների բարձր ռիսկ և որոշ պերինատալ ինֆեկցիոն հիվանդությունների բարձր ռիսկ:

Ինվազիվ միջամտությունն իրականացնելուց առաջ ցուցված է ամուսնական զույգի խորհրդատվություն:Սա կարող է իրականացվել մանկաբարձ-գինեկոլոգի ,պտղի հետազոտմանմբ զբաղվող մասնագետի ,գենետիկ խորհրդատուի կամ հատուկ ընտրված բուժքրոջ կողմից: (Ապացուցողական մակարդակ: 4):Խորհրդատվության ընթացքում պետք է քննարկվեն հետևյալ հարցերը. ինվազիվ միջամտության օգուտներն ու ռիսկերը ընդդեմ սքրինինգի, ԽԹԲ և ամնիոցենտեզի տարբերությունը ճշգր արդյունքների ճշգրտության տեսանկյունից, հղիության ախտաբանության հայտնաբերման դեպքում հնարավոր բարդությունների ,հղիության ընդհատման տեսակի և ժամկետի ընտրության հարցը (22),միջամտություն կախյալ պտղի կորստի վրա ազգային և էնդեմիկ ռիսկերի ազդեցությունը, իրականացվող որոշակի լաբորատոր թեստի ճշգրտության և սահմանափակումների համապատասխանեցումը առկա անբարենպաստ արդյունքների և հրապարակման ժամկետների մասին ինֆորմացիայի հետ,արդյունքների հաղորդման մեթոդները,թեստին հաջորդող խերհրդատվության անհրաժեշտությունը, Rh(=) ,T=0 կանանց մոտ միջամտությունից հետո հակա-Rh իմունիզացիայի անցկացման անհրաժեշտությունը (2,

22):Այս մանրակրկիտ խորհրդատվությունից հետո պետք է ստանալ կնոջ գրավոր համաձայնությունը միջամտության իրականացման համար (2):

5 .Ամնիոցենտեզի կամ ԽԹԲ կատարման ցուցումները

Ներկայումս ամնիոցենտեզի կամ ԽԹԲ –ի կատարման ժամանակակից վավերական ցուցումներն են

Պտղի անէուպլոիդիայի բարձր ռիսկ,պտղի հայտնի գենետիկ հիվանդությունների բարձր ռիսկ կամ բիոքիմիական մարկերների շեղումներ,մայրական ինֆեկցիոն հիվանդությունները ,որոնք կարող են փոխանցվել տրանսպլացենտար և որոշ պարագաներում մոր ցանկությունը:

Պտղի անէուպլոիդիայի բարձր ռիսկ *(Ապացուցողական մակարդակ: 4)*

Բարձր ռիսկ կդիտվի սկրինինգային թեստերի որոշակի արդյունքների դեպքում (առաջին եռամսյակի կոմբինացված թեստ-ոչ բջջային ԴՆԹ թեստավորում,մոր արյան հունում շրջանառող պտղի ԴՆԹ –ի ուսումնասիրություն –ոչ ինվազիվ պրենատալ թեստ (NIPT),երկրորդ եռամսյակում բիոքիմիական մարկերների շեղումներ- եռաթեստ կամ քառաթեստ, ՈՒՀՀ –ով պտղի անոմալիաների հայտնաբերում(պտղի կառուցվածքային անոմալիա-ասոցացվող քրոմոսոմային անոմալիայի հետ),ԲՄԱ (նախորդող հղիություն քրոմոսոմային անոմալիա ունեցող պտղով ,կամ վերոհիշյալ պաթոլոգիայով երեխա),հարազատների մոտ պաթոլոգիայի առկայություն (ծնողների մոտ բալանսավորված քրոմոսոմային տրանսլոկացիայի կամ ինվերսիայի առկայություն,ծնողներ մոտ անէուպոիդիա կամ մոզաիցիզմ) (17):

Մոր բարձր տարիքը (>35) ինքնին ինվազիվ միջամտության ցուցում չէ ,սակայն որոշ երկրներում դեռևս համարվում է ցուցում(4,17):

Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառումը ինվազիվ միջամտության ցուցում չէ:Այնուամենայնիվ հղիությունները, որոնք զարգացել են սպերմատոզոիդի ներցիտոպլազմային ներարկման դեպքում ,պայմանավորված օլիգոսպերմիայով , կարող են հանգեցնել սերմի քրոմոսոմային անոմալիաներով պայմանավորված անպտղության արական սեռի պտղին փոխանցման բարձր ռիսկով:

Պտղի գենետիկ անոմալիաների և բիոքիմիական շեղումների բարձր ռիսկ*(17):*
(Ապացուցողական մակարդակ:4)

Բարձր ռիսկ դիտվում է երբ.
Առկա է ընտանեկան ժառանգականություն հայտնի մուտացիա կամ բիոքիմիական շեղումներ, եթե X-շղթայակցված մուտացիա ունեցող կինը կրում է արական սեռի պտուղ,եթե երկու ծնողներն ունեն աուտոսոմ ռեցեսիվ գենետիկ հիվանդություն:

Մորից փոխանցվող ինֆեկցիոն հիվանդություններ:

Մոր մոտ տոքսոպլազմոզի ,ցիտոմեգալովիրուսի և կարմրախտի առաջնակի հայտնաբերման դեպքում պրենատալ ինվազիվ թեստերը կիրառվում են հաստատելու կամ բացառելու համար պտղի ինֆեկցումը:

Մոր ցանկություն (Ապացուցողական մակարդակ: 4)

Մոր ցանկությունը ստանդարտ չափանիշ չէ ինվազիվ միջամտության անցկացման համար,թեև բացառիկ հանգամանքներում ,մասնավորապես ծնողի խիստ անհանգստության դեպքում,մանրակրկիտ և ծավալուն խորհրդատվությունից հետո միայն համապատասխան մասնագետը կարող է թույլատրել միջամտության իրականացումը:

Պտղի արյան նմուշառման ցուցումներ (Ապացուցողական մակարդակ :4)

ՊԱՆ առավել տարածված ցուցումներն են ամնիոցենտեզից հետո պտղի քրոմոսոմային մոզաիցիզմի կասկածը կամ պտղի արյունաբանական գնահատումը(Պտղի մոտ անեմիայի քանակական գնահատումը,թրոմբոցիտների ,լիմֆոցիտների մակարդակի որոշում) (17, 62): Սակային ներկայիս պրակտիկայում ՊԱՆ վերոհիշյալ ցուցումներով չափազանց հազվադեպ է իրականացվում՝ իր տեղը զիջելով ամնիոցենտեզին և խորիոնի թավիկների բիոպսիային.ամբողջական կարիոտիպ ,արյան խումբ,թրոմբոցիտար անտիգենի որոշում,գենետիկ թեստավորում ,ինֆեկցիոն հիվանդություններ ,պլազմայի և շիճուկի հետազոտություն(հորմոններ ,մետաբոլիտներ):

Միջամտությունից առաջ և հետո իրականացվող ընթացակարգեր:

Մոր արյան ռեզուսի և արյան շիճուկում ալո-հակամարմինների որոշում միջամտությունից առաջ,և չսենսիբիլիզացված կանանց հակա-D հակամարմնի ներարկում, բացառությամբ այն դեպքերի ,երբ պտղի հայրը նույնպես ունի ռեզուս բացասական արյուն:

- *Մոր սկրինինգ՝արյան միջոցով փոխանցվող վիրուսների հայտնաբերման նպատակով (Հեպատիտներ B և C (HBV & HCV); ՄԻԱՎ ախտորոշում խորհուրդ չի տրվում):*

- *Պրոֆիլակտիկ հակաբիոտիկոթերապիան միջամտությունից առաջ ներկայումս խորհուրդ չի տրվում:*
- *Միջամտության ընթացքում պետք է ապահովել ասեպտիկայի հիմնական կանոնները:*
- *Միջամտությանը վերաբերվող մանրամասն զեկույց պետք է տրամադրվի առողջապահության կառավարման մասնագետին:*

Մոր արյան խմբի որոշում և հակա Rh պրոֆիլակտիկա (Ապացույցների մակարդակ: 2+)

Բոլոր ուղեցույցները խորհուրդ են տալիս մոր արյան ռեզուսի և արյան շիճուկում ալո-հակամարմինների որոշում միջամտությունից առաջ(68):Ռեզուս պրոֆիլակտիկան խստորեն ցուցված է ռեզուս դրական զուգընկեր ունեցող ռեզուս չսենսիբիլիզացված ռեզուս-բացասական արյուն ունեցող կանանց դեպքում,բացառությամբ այն դեպքերի ,եթե պտուղը ռեզուս բացասական է ՝հայտնաբերված պտղի ԴՆԹ ի ոչ բջջային որոշման եղանակով:Սովորաբար օգտագործվում է հակա –D հակամարմինների մեկ դեղաչափ ՝միջմկանային ներարկման ձևով(68):

361 կանանց պրոսպեկտիվ հետազոտությունը,որոնք ունեն Rh(=) արյուն ,որոնց կատարվել է ամնիոցենտեզ և որոնք չեն ստացել հակա–D իմուն շիճուկ և ծնել են ռեզուս դրական նորածին ,ցույց է տվել,որ նրանցից 5 –ի (1.4%) արյան շիճուկում հայտնաբերվել են հակա–D հակամարմիններ,սակայն նորածինների մոտ որևէ կլինիկական դրսևորումներ չեն հայտնաբերվել(69): 115 կանանց համանման հետազոտությամբ հայտնաբերվել է համապատասխան արդյունք 3.4%,ընդորում ծնված չորս նորածիններից մեկը ունեցել է արյան փոխներարկման կարիք,սակայն երկու տարեկան հասակում զարգացումը գնահատվել է նորմալ(70):Այնուամենայնիվ կնոջ արյան իմունիզացիան հակառեզուս հակամարմիններով կիրառվում է դեռևս 1970 –ականներից,և ռեզուս իմունիզացիա ստացած 944 ռեզուս բացասական կանանցից ոչ ոքի մոտ չի հայտնաբերվել ռեզուս սենսիբիլիզացիա(72):

Մայրական սկրինինգ –արյան միջոցով փոխանցվող վիրուսների հայտնաբերման նպատակով:

Միջամտության ընթացքում մորից պտղին վիրուսի անցման հավանականությունն աննշան է և հավանաբար սահմանափակվում է միայն բարձր վիրուսակրությամբ հղիներով(73):

Հակաբիոտիկային պրոֆիլակտիկա

Առկա է միայն մեկ ռետրոսպեկտիվ կոհորտային հետազոտություն ամնիոցենտեզից առաջ հակաբիոտիկների (ազիտրոմիցին) պրոֆիլակտիկ կիրառման հետ կապված (n=34 923). Հայտնաբերվել է միջամտությունից կախյալ կրելախախտի ցածր հաճախականություն (0.03%) և պտղաթաղանթների վաղաժամ պատռման ցածր հաճախականություն (0.06%) ազիտրոմիցին ստացած խմբի մոտ (n=21219) ի տարբերություն հակաբիոտիկ չստացած խմբի (n=12 529) (0.28% և 1.12% համապատասխանաբար) (74) : (Ապացուցողական մակարդակ: 1-):Այնուամենայնիվ վերոհիշյալ հետազոտության հրատարակումը բանավեճերի պատճառ է դարձել և պետք է մեկնաբանվեն զգուշությամբ(75-77):

Մեկ այլ ավելի փոքր ռետրոսպեկտիվ հետազոտություն (n=1744) չի հայտնաբերել պտղի կորստի հաճախականության տարբերություն հակաբիոտիկներ ստացած (ամոքսացիլին /կլավուլոնատ կամ ազիտրոմիցին)1.3% և չստացած կանանց խմբերի միջև1.2%(78) Ապացուցողական մակարդակ :2++):

Ներկայումս անբավարար են բարձր որակյալ տվյալները ինվազիվ միջամտությունից առաջ անտիբիոտիկների պրոֆիլակտիկ էֆեկտի մասին,ինչի կապակցությամբ հակաբիոտիկների կիրառումը ներկայումս հաստատված չէ գիտական կենտրոնների կողմից (79):

ՈՒՀՀ միջամտությունից առաջ և հետո *(Ապացուցողական մակարդակ: 4)*

Մինչև կնոջը ինվազիվ միջամտության ենթարկելը անհրաժեշտ է անցկացնել ՈՒՀՀ հետևյալ պարամետրերի որոշման նպատակով.պտուղների քանակ և կենսունակություն,պլացենտայի տեղակայում ,ամնիոտիկ հեղուկի քանակություն,գեստացիոն ժամկետ (3) :ՈՒՀՀ –ն ինվազիվ միջամտությունից հետո կիրառվում է որոշելու համար պտղի սրտի աշխատանքը ,ռետրոպլացենտար հեմատոմայի առկայությունը,ամնիոտիկ հեղուկի քանակը:Դա կարող է իրականացվել անմիջապես միջամտությունից հետո կամ մի քանի օր հետո,կախված կոնկրետ դեպքից (22):

Ասեպտիկա *(Ապացուցողական մակարդակ: 4)*

Միջամտության ընթացքում պետք է ապահովվեն ասեպտիկայի հիմնական կանոնները ,որպեսզի բացառվեն մայր-պտուղ համակարգի ինֆեկցումը:Միջամտության իրականացման համար անհրաժեշտ են ստերիլ ձեռնոցներ,թանզիֆե տամպոններ,պինցետ և ստերիլ ասեղ(3):

Մինչ տրանսաբդոմինալ ԽԹԲ,ամնիոցենտեզ կամ ՊԱՆ ,որովայնի առաջային պատը անհրաժեշտ է մշակել անտիսեպտիկ լուծույթով (քլորհեքսիդին ,յոդին) և ծածկել ստերիլ

սփռոցով:Զոնդը պահվում է ստերիլ տոպրակի մեջ,կամ դեզինֆեկցիայի է ենթարկվում:Խորհուրդ է տրվում օգտագործել ստերիլ սրվակով գել:Տրանսցերվիկալ ԽԹԲ –ից առաջ արտաքին սեռական օրգանների ,հեշտոցի ,արգանդի վզիկի անտիսեպտիկ լուծույթներով մշակումից հետո արգանդի վզիկը մերկացվում է ստերիլ հայելիներով (2,3,5):

Տեղային անեսթեզիա

Կոհրեյնի վերջին մետաանալիզները միավորել են 5 ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություններ ամնիոցենտեզի ընթացքում անզգայացման տարբեր մեթոդների գնահատման վերաբերյալ, ԽԹԲ –ի վերաբերյալ ռանդոմիզացված հետազոտություններ չկան:Եզրահանգվել է ,որ ընդհանուր առմամբ ամնիոցենտեզը ուղեկցվում է աննշան ցավազգացողությամբ ,հետևաբար անզգայացում կիրառելու համար ոչ մի փաստարկ չկա (80) (Ապացույցի մակարդակ:1+): ԽԹԲ տրանսաբդոմինալ մուտքի դեպքում առաջարկվում է կիրառել տեղային անեսթեզիա ,խուսափելու համար կնոջը պատճառված դիսկոմֆորտից պայմանավորված ասեղի մեծ չափերով (2, 3,80): Ըստ Մեծ Բրիտանիայում անցկացված վերջին հարցումների աբդոմինալ ԽԹԲ-ի դեպքում օպերատորները գերազանցապես կիրառում են տեղային անեսթեզիա (Ապացույցի մակարդակ:3): ՊԱՆ-ից առաջ խորհուրդ է տրվում տեղային անզգայացում միջամտության ընթացքում կնոջ շարժումներից խուսափելու համար: Տրանսցերվիկալ ԽԹԲ-ից առաջ անզգայացում ցուցված չէ:

Հաշվետվություն (Ապացույցի մակարդակ:4)

Իրականացված միջամտության մասին մանրակրկիտ հաշվետվություն պետք է ներկայացվի պացիենտին և նրա բժշկին:Հաշվետվության մեջ պետք է ներառված լինեն հետևյալ տվյալները.ինվազիվ դիագնոստիկայի ցուցումները ,միջամտությանը նախորդող ՈՒԶՀ տվյալները,միջամտության նկարագրությունը ,մասնավորապես օգտագործվող սարքը ,պունկցիայի տեղակայումը ,իրականացված պունկցիաների թիվը ,ստացված նմուշի քանակը ,ստացված ամնիոտիկ հեղուկի նկարագրությունը ամնիոցենտեզի դեպքում,պետք է նկարագրվի նաև պտղի կենսունակությունը,ընկերքի վիչակը և ամնիոտիկ հեղուկի քանակը միջամտությունից հետո,կնոջ ռեզուս ստատուսը ,իրականացված ռեզուս կանխարգելման մասին տվյալներ,իրականացված լաբորատոր քննության մասին տվյալներ(հասարակ G-բջջային կարիոտիպ և/կամ քանակական ֆյուորեսցենտային պոլիմերազային շղթայական ռեակցիա (QF-PCR),Ֆլյուորեսցենտային հիբրիդիզացիա in situ (տեղում) FISH միկրոչիպերով կամ առանց միկրոչիպերի (2):

Հրահանգներ միջամտությունից հետո (Ապացույցի մակարդակ: 4)

Միջամտությունից հետո 12-24 ժամվա ընթացքում ֆիզիկական ակտիվության սահմանափակումը չի հանդիսանում պարտադիր,քանի որ չկա ոչ մի վկայություն կլինիկական օգուտի մասին:Ոչ մի յուրահատուկ դեղորայքային բուժում խորհուրդ չի տրվում,բացառությամբ պարացետամոլի (ացետամինոֆեն) միջամտությունից անմիջապես հետո՝զգալի որովայնային դիսկոմֆորտը նվազեցնելու համար (3) ժամկետ:Տոկոլիտիկների (տերբուտալին) կամ պրոգեստերոնային դեղամիջոցների ամնիոցենտեզից կամ ԽԹԲ-ից հետո կիրառման առավելությունների մասին հստակ տեղեկություններ չկան: Միջամտությունից հետո գենետիկական խորհրդատվություն իրականացվում է ,եթե միջամտության արդյունքում հայտնաբերվում են համապատասխան շեղումներ (Ապացույցի մակարդակ:4)

6 .Գենետիկ հետազոտությունների տեսակներ.ինչ փնտրել

Ինվազիվ միջամտության արդյունքում ստացված նմուշով անցկացնում են հետևյալ լաբորատոր հետազոտությունները՝ամբողջական կարիոտիպ,արագ թեստավորում ,քրոմոսոմային անհամամասնությունների մոլեկուլյար ախտորոշում,մոնոգենային հիվանդությունների ախտորոշում:

Ամբողջական կարիոտիպի որոշում *(Ապացույցի մակարդակ :4)*

Կարիոտիպի որոշման հասարակ մեթոդ է ամնիոցենտեզի կամ ԽԹԲ –ի արդյունքում ստացված պլացենտար բջիջների կամ կուլտիվացված ամնիոցիտների մետաֆազային անալիզը:Արդյունքները հասանելի են լինում երկու շաբաթում:Կորդոցենտեզի արդյունքում ստացված ֆետալ լիմֆոցիտների մետաֆազային անալիզի արդյունքները հասանելի են լինում երկուսից հինգ օրում:Հնարավոր է ԽԹԲ –ի արդյունքում ստացված ցիտոտրոֆոբլաստի մետաֆազային բջիջների հետազոտություն,որի արդյունքը ստացվում է հինգ օրվա ընթացքում:

Արագ թեստավորում *(Ապացույցի մակարդակ :4)*

Արագ թեստավորումը , ինչպիսիք են քանակական ՊՇՌ-ն (QF-PCR),կամ ավելի արագ FISH (ֆլյուորեսցենտային in situ հիբրիդիզացիան) կարող է իրականացվել թավիկների կամ ամնիոտիկ հեղուկի միջոցով հետազոտելով կոնկրետ քրոմոսոմներ (21, 13, 18, X, Y):Այս թեստերի արդյունքները ստացվում են մեկ երկու օրվա ընթացքում և կիրառվում են

նախորդող դրական արդյունքից հետո ,կամ ՈՒՀՀ տվյալներով և ըստ բիոքիմիական մարկերների պտղի մոտ անեուպլոիդիայի կասկածի դեպքում:Որոշ դեպքերում քանակական ՊՇՌ մեթոդը (QF-PCR) փոխարինել է ամբողջական կարիոտիպի որոշումը:Այնուամենայնիվ երբեմն նկարագրվել են արագ թեստի արդյունքների անճշտություններ (կեղծ դրական կամ կեղծ բացասական արդյունքներ) :

Ուստի արագ թեստի ախտաբանական արդյունքների դեպքում ,դրանք պետք է վերստուգվեն մետաֆազային կուլտիվացմամբ ,կամ պետք է կապակցվեն ՈՒՀՀ հայտնաբերված անոմալիայի հետ մինչը հղիության ընդհատման վերաբերյալ որոշում կայացնելը (81):Հղիությունն ընդհատելու իրավունքը միայն էքսպրես թեստի պաթոլոգիկ արդյունքից հետո կարգավորվում է առողջապահական համակրգի կողմից և կախված է տեղական քաղաքականությունից:

Քրոմոսոմային անոմալիաների մոլեկուլյար դիագնոստիկա

Միկրոչիպերի մեթոդը (մասնավորապես մասիվ համեմատական գենոմային հիբրիդիզացիան) վերջերս են բերվել պրենատալ դիագնոստիկայի ոլորտ:Այս մեթոդները կարող են հայտնաբերել սուբմիկրոսկոպիկ քրոմոսոմային դելեցիաներն ու դուպլիկացիաները (պատճենների թվի վարիացիաներ(CNV) (17):Ընդորում հասանելի են տարբեր հարթակներ լայնածավալ գենոմային (10–400-Kb միջակայքով լուծումով) , թիրախային մեթոդներ (այն է մեթոդ ,երբ օգտագործվում է բակտերիալ արհեստական քրոմոսոմ) և խառը համակցումներ:Առաջին լայնածավալ հետազոտությունը ,որը համեմատել է միկրոչիպերի մեթոդը կարիոտիպի որոշման հետ,ցույց է տվել ,որ միկրոչիպերի եղանակը հայտնաբերել է կլինիկորեն նշանակալի քրոմոսոմային աբերացիաներ պտուղների 6% -ի մոտ,որոնք ունեցել են նորմալ կարիոտիպ և կառուցվածքային խանգարումներ և 1.7% նրանց մոտ ,որոնք ենթարկվել են ինվազիվ միջամտության կապված մոր մեծ տարիքի հետ կամ պայմանավորված սկրինինգ-դրական տվյալներով (82):Օգտագործելով համեմատական գենոմային հիբրիդիզացիա յի(ՀԳՀ) մեթոդով ստացվել են հավելյալ դիագնոստիկ տվյալներ 7.0% և 5.0% համապատասխանաբար սրտի բնածին արատների և մեծացած օձիքային տարածություն (OS) դեպքում (85,89) (Ապացույցի մակարդակ :2++):Ներկայումս այս մեթոդները կիրառվում են պտղի կառուցվածքային անոմալիաների առկայության դեպքում կամ եթե OS>3.5մմ առաջին եռամսյակում: Հղիությունների այս խմբերում միկրոչիպային հետազոտմամբ դեպքում հայտնաբերվում է պատճենների թվի վարիացիաների(CNV) պաթոլոգիկ աճ:Այնուամենայնիվ այս մեթոդների կիրառումը ոչ թե ընտրողաբար ,այլ բնակչության ընդհանուր պոպուլյացիայում դեռևս քննարկումների է ենթակա ,պայմանավորված անհայտ

նշանակության արդյունքների դժվար ինտերպրիտացիայով:Որոշ մասնագետներ անհայտ նշանակության պատասխանները չեն հաղորդում զույգի խորհրդատվության ոչ միանշանակությունից խուսափելու նպատակով (16) (Ապացույցի մակարդակ: 4)

Մոնոգեն հիվանդությունների ախտորոշում

Պրենատալ ախտորոշման ընթացքում կիրառվող ինվազիվ միջամտությունները կարող են հայտնաբերել ցանկացած մոնոգենային հիվանդություն ,որի մոլեկուլյար դեֆեկտը լավ հայտնի է կամ ավելի վաղ նկարագրվել է:

7. Մայրական ինֆեկցիաներ

- *HbeAg -բացասական կանանց մոտ HBV –ի ուղղահայաց անցման ռիսկը մորից պտղին ամնիոցենտեզի ընթացքում աննշան է:*
- *ՄԻԱՎ դրական կանանց մոտ վիրուսի վերտիկալ փոխանցման ռիսկը բարձրացած չէ ,եթե կինը ստացել է բարձր ակտիվության հակառետրովիրուսային թերապիա:*

